ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿԳՄՄՆ <<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց

Առարկա՝ Ֆրանսերեն

ԿԱՏԱՐՈՂ՝՝ Նաիրա Պետրոսյան

Դպրոց՝ «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց»ՊՈԱԿ

Ղեկավար՝ Օհաննա Ավետիսյան

Գյումրի 2023

Բովանդակություն

1.Ներածություն……3

2. Գլուխ 1. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը դպրոցականների
վրա…….....5

3. Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթության բնագավառում, նրանց կիրառումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց …….....7

4. Գլուխ 3. Առցանց (հեռավար) ուսուցում……10

5. Գլուխ 4. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը օտար լեզվի, մասնավորապես ֆրանսերենի ուսուցման գործում…….....13

6.Եզրակացություն……..15

7.Գրականություն……17

Ներածություն

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) տեղեկատվության փոխանցման և սպառման հետ կապված գիտելիքների, պրակտիկայի և գործիքների ամբողջություն են: Դրանց արդյունավետ օգտագործումը կրթության գործընթացում արդիական խնդիր է: Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները գնալով ավելի են զարգանում և տեղ գտնում յուրաքանչյուրիս կյանքում: Կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Կրթության բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվում է ուսումնաճանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը: Կրթական քաղաքականության իրականացման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն մեծացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը: ՏՀՏ կիրառմամբ անցկացրած դասը գունեղ է, տեսանելի, ինտերակտիվ, ուսուցչին հնարավորություն է տալիս աշխատել աշակերտների հետ տարբերակված և անհատական, վերահսկել ու գնահատել ուսուցման արդյունքները:

Մարդկությունը 21-րդ դարում քայլում է տեղեկատվական տեխնոլոգիաների հետ համընթաց, ինչն էլ փոխել է ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, ընտանիքի և հասարակության հարաբերությունները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը: Ներկայիս պայմաններում շատ կարևոր է, որ մարդը լինի մեդիագրագետ, կարողանա օգտվել ՏՀՏ գործիքներից և ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաները հանդիսանում են ժամանակակից ամենաարագ զարգացող բնագավառներից մեկը, որն աստիճանաբար մուտք է գործում հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ հանգեցնելով դրանց որակական փոփոխությունների: Կրթության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը նույնպես տարեցտարի

ընդլայնվում է: Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

Աշխատանքի **նպատակը**՝ ուսումնասիրել, բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը դասապրոցեսում որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց: Նպատակն իրականացնելու համար առաջադրված **խնդիրներն** են՝

- Ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, կիրառման առանձնահատկությունները, դրական և բացասական ազդեցությունը տարրական և միջին դասարանների աշակերտների կրթության գործընթացում:

- Ներկայացնել սովորողների ներգրավվածության բարձրացման մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության նշանակությունը:

-Ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան և ներգրավվածությունը բարձրացնելու միջոց,

- Ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը օտար լեզվի, մասնավորապես ֆրանսերենի ուսուցման գործում:

Գլուխ 1. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դրական և բացասական ազդեցությունը դպրոցականների վրա

Տեղեկատվական տեխնոլոգիան (ՏՏ) (Information Technology – IT, techno՝ արվեստ, արհեստ, գիտություն, logos՝ հասկացություն, ուսում) գործընթաց է, որն օգտագործում է տվյալների փոխանակման, հավաքման և մշակման մեթոդների ու միջոցների ամբողջությունը, օբյեկտի, գործընթացի կամ ինֆորմացիոն առարկայի վիճակի վերաբերյալ նոր որակի ինֆորմացիայի ստացման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական և ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգում դրանք համարվում են բազմագործառույթ միջոցներ, որոնք օգնում են ստեղծագործ մտածողությանը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկել ուսումնական գործընթացում, հեշտացնել ուսումնասիրվող նյութի յուրացումը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ուսուցման, գնահատման և ինքնագնահատման ժամանակակից մեթոդներ: ՏՀՏ-ների կիրառումը դասապրոցեսում ուսուցչից պահանջում է դասին նախապատրաստվելու մեծ ջանքեր և ժամանակ, քանի որ ամենօրյա դասը պլանավորելիս անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի սցենարը, նախագծել գործողությունների հերթականությունը և դրանք ճիշտ ձևով մատուցել աշակերտներին: Այս ամենի արդյունավետ իրականացման համար կարևորվում է ուսուցչի մեդիագրագիտությունը, դասավանդվող նյութի լիարժեք իմացությունը: ՏՀՏ գործքիներն օգտագործելիս շատ կարևոր է նաև դրանց արդյունավետ և տեղին կիրառումը: Աշակերտներին տեսասահիկների միջոցով կարելի է բացատրել օրվա դասը, իհարկե դա ուսուցչից հավելյալ աշխատանք կպահանջի, բայց դասն ավելի հետաքրքիր ու բովանդակալից կդարձնի: Համակարգիչներից օգտվելը նաև կզարգացնի աշակերտների տեսողական հիշողությունը և ավելի պատկերավոր կդարձնի ուսուցանվող նյութը: Արդի պայմաններում ինտերնետ կապը հնարավորություն է տալիս սովորողին սովորել նաև աշխարհի ցանկացած վայրում գտնվող ուսումնական հաստատությունում: Նման հնարավորությունից կարող են օգտվել ցանկացած տարիքում, առանց տարիքային սահմանափակման: Ժամանակակից տեխնիկական միջոցների շնորհիվ կարելի է նաև մուտք գործել աշխարհի խոշորագույն գրադարանները, այցելել վիրտուալ թանգարաններ, լսել երաժշտություն, դիտել

ուսուցողական ֆիլմեր, մուլտֆիլմեր, ծանոթանալ այլ երկրում ապրող հասակակիցների հետ: Տեղեկատվական միջոցների գրագետ օգտագործման արդյունքում կարելի է զարգացնել դպրոցականների ստեղծագործական հմտությունները, սովորեցնել ինքնուրույն որոնումներ և հետազոտություններ կատարել, բարձրացնել սովորելու մոտիվացիան, զարգացնել հիշողությունը, տրամաբանական մտածողությունը և բարձրացնել դասերին մասնակցության ակտիվությունը: Բայց սրան զուգահեռ, տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն: Համացանցից դպրոցականը կարող է ստանալ ինչպես օգտակար, այնպես էլ վնասակար տեղեկատվություն: Այն կարող է կտրել իրականությունից՝ տանելով դեպի վիրտուալ իրականություն՝ դրանով դուրս մղելով կենդանի շփումը: Ցավոք, այն կարող է առաջացնել նաև կախվածություն: Նման դեպքերում ծնողի և մանկավարժի խնդիրն է՝ վերադարձնել երեխային իրականություն, օգնել նրան գտնել նոր հետաքրքրություններ: Հակառակ դեպքում, երեխան ունակ չի լինի ինքնուրույն մտածելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու:

Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրթության բնագավառում, նրանց կիրառումը դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց

ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը. Ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր:
Նախքան աշակերտներին ծանոթացնելը ՏՀՏ գործիքների առանձնահատկություններին, ուսուցիչն ինքը պետք է ուսումնասիրի դրանք, հավաքագրի տեղեկատվություն և նաև գործնականում կարողանա կիրառել դրանք: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ: Ցանկացած առարկա կարող է արդյունավետ դասավանդվել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, որը դրական ազդեցություն կունենա բոլոր տարիքի դպրոցականների ուսուցման գործընթացի վրա:

Տարրական դպրոցի ուսուցչի առջև ծառացած հիմնական խնդիրներից է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, խորացնել գիտելիքները շրջապատող աշխարհի մասին, բարձրացնել երեխաների մտավոր գործունեությունը և զարգացնել խոսքը: Տարրական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործվում են ուսումնական նյութն առավել գրավիչ և դյուրըմբռնելի ներկայացնելու համար: Միջին դպրոցում Թվային գրագիտություն (Ինֆորմատիկա) առարկայի դասավանդման ընթացքում շեշտը դրվում է համակարգչով աշխատելու հիմնական հմտություններ մշակելու վրա: Ձեռք բերված հմտությունները կիրառվում են մյուս առարկաների ուսումնական նյութի հայթայթման, մշակման, յուրացման, տնային առաջադրանքների կատարման, ազատ ժամանցի կազմակերպման նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ծրագրամեթոդական ապահովումը ոչ միայն բարձրացնում է դասի արդյունավետությունը և ուսումնառության մակարդակը, այլև ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման մեջ սովորողների հմտությունների մակարդակը:

Ուսուցչի մասնագիտական կարողությունների և բազմազան մեթոդների իմացության և դրանք կիրառելու, համադրելու հմտության շնորհիվ ուսումնական նյութը դառնում է ոչ միայն հետաքրքիր, այլև՝ մատչելի: Կարևորելով դասավանդման գործընթացում ուսուցչի մասնագիտական կարողությունները, միաժամանակ սովորելու և սովորեցնելու հմտությունների և ժամանակակից մեթոդներով և տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու փորձառությունը, համոզված ենք, որ այն հնարավորություն է տալիս դասն արդյունավետ

կազմակերպել և նպաստում է սովորողների՝ դասընթացի նկատմամբ հետաքրքրության աճին:

Ժամանակակից մեթոդներով աշխատելը հնարավորություն է ընձեռում կրթական միջավայրի ստեղծման և սովորողների կողմից լեզվական գիտելիքների ինքնուրույն յուրացման համար: Ուսուցման այս մեթոդները ապահովում են ակտիվություն, զարգացնում են մտածողությունը, հեշտացնում հիշելը, առաջացնում են հետաքրքրություն տվյալ առարկայի նկատմամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցված նոր նյութը հեշտ է յուրացվում շնորհիվ գեղեցիկ պատկերների, գունային ճիշտ համադրության: Իհարկե, դասը հեշտ է յուրացվում նաև թղթի վրա նկարած գծապատկերների, նկարների միջոցով, բայց միևնույն է, համակարգչային տեխնոլոգիաներն ապահովում են բարձր տեսանելիություն ու մատչելիություն: Դպրոցականներն ակտիվորեն ներգրավվում են դասապրոցեսին, մասնակցում քննարկումներին, ինչի արդյունքում ամրապնդվում է նյութը: Այնուհետև ստացած գիտելիքն ստուգվում է թեստերի, խաչբառերի, բազմաբնույթ առաջադրանքների միջոցով, որոնք դասը դարձնում են ավելի հետաքրքիր:

Բարձր արդյունքի հասնելու համար պետք է ճիշտ ընտրել ակտիվացնող մեթոդը: Դրա համար պետք է լավ ուսումնասիրել թեման, առանձնացնել դասի նպատակները՝ դրանց մեջ նշելով նաև ակնկալվող արդյունքները: Ակտիվ մեթոդները ուսուցման գործընթացում ունեն բազմաֆունկցիոնալ նշանակություն: Ուստի, ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ծրագրամեթոդական ապահովումը բարձրացնում է ուսումնառության մակարդակը, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման սովորողների հմտությունների մակարդակը, ստեղծագործականությունն ու ինքնազարգացումը: Նրանք ձեռք են բերում պատասխանատվություն՝ որոնումներ կատարելու, փնտրելու, գտնելու համապատասխան տեղեկատվությունը, ուսումնասիրելու և ի նպատակ օգտագործելու:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը բնորոշվում է նաև ուսուցչի տեսանկյունից:

Մնալով որպես ուսումնառության գործընթացը իրականացնող կարևոր անձ՝ նա ձեռք է բերում մի նոր՝ոչ պակաս կարևոր, աջակցողի և համագործակցողի դեր, դառնում խորհրդատու համապատասխան տեղեկատվության և առաջացած հարցերի լուծմանն ուղղված որոնման համար: Նա օգնում է աշակերտներին գրագետ և արդյունավետ օգտագործել համացանցի անսահման հնարավորություններով պայմանավորված որոնումների արդյունքները, օգնում է ծանոթանալ դրանց կիրառման հնարավորություններին:

Գլուխ 3. Առցանց (հեռավար) ուսուցում

Առցանց ուսուցումը յուրահատուկ կրթական համակարգ է, որը հիմնվում է արդի մանկավարժական, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վրա: Առցանց ուսուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ թույլ է տալիս կրթությունը կազմակերպել հեռավար ձևաչափով՝ կտրվելով դպրոցի ֆիզիկական միջավայրից:

Քովիդ-19 համավարակի պատճառով Հայաստանում գործող ավանդական կրթական համակարգը ամբողջությամբ անցավ հեռավար ուսուցման մոդելին: Եվ ուսուցիչների, և աշակերտ-ների համար բարդ էր հարմարվել այս մոդելին, քանի որ փոխվել էր ոչ միայն կրթության կազմակերպման միջավայրը, այլ նաև ուսուցման գործընթացի իրականացման միջոցներն ու ձևերը: Առցանց ուսուցման անցնելու ժամանակ ուսուցչի համար դժվար էր գրավել աշակերտի ուշադրությունը: Ուսուցիչը ստիպված էր նյութը մատուցել ավելի հետաքրքիր ձևով, մշակել դասընթացների էլեկտրոնային տարբերակներ: Աստիճանաբար և ուսուցիչը, և աշակերտը ընտելանում են տեղեկատվական դարի գործիքներին: Նրանցից պահանջվում է տիրապետել համակարգչային գրագիտությանը և այն ուսուցանել նաև սովորողներին: Սա ուսուցման գործընթացում կենդանի մթնոլորտ ստեղծելու հիմնական պայմաններից մեկն է, ինչը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում ուսումնական գործընթացի նկատմամբ, ավելի հետաքրքիր է դարձնում այն, և ուսուցանվող նյութն ավելի լավ է ընկալվում:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման գործընթացում առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնք պայմանավորված են համապատասխան ծրագրային ապահովման մշակմամբ, էլեկտրոնային միջոցների բովանդակային հագեցվածությամբ և ուսուցման ոլորտում դրանց օգտագործմամբ: էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը տեղեկատվական կրթական միջավայրի ստեղծումն ու արդյունավետ օգտագործումն է: էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնախնդիրներից է նաև դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը:

էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:

ՏՀՏ միջոցների զարգացումը նպաստում է տեղեկատվական հեռահաղորդակցմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը: Ինտերնետային գլոբալ համացանցը ապահովում է հսկայական ծավալով տեղեկատվության մատչելիություն Երկիր մոլորակի ամբողջ տարածքում: Համակարգչային հաղորդակցման միջոցներից առավել տարածված են էլեկտրոնային փոստը, համացանցը և էլեկտրոնային կրիչները: Այս միջոցները դասավանդողներին և սովորողներին հնարավորություն են ընձեռում համատեղ օգտագործելու տեղեկատվությունը, մասնակցելու խնդիրների լուծմանն ու քննարկմանը: Էլեկտրոնային փոստը լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցման ժամանակ հետադարձ կապերի հաստատման ու համակարգման համար: Այն շահավետ է օգտագործել նաև դասավանդողի և սովորողների արդյունավետ համագործակցության համար, որի միջոցով էլ կարելի է գրավոր շարադրել սեփական կարծիքը, հարցեր տալ, առաջարկություններ անել, ծանոթանալ բոլոր մասնակիցների պատասխաններին, առաջարկություններին և կատարել գնահատում: Բազմաթիվ գործիքներ են առաջարկում Google և Microsoft հավելվածները: Բոլորն էլ նույն գործառույթն են իրականացնում, սակայն Google-ի գործիքներն ունեն միաժամանակյա հասանելիության հնարավորություն և նրանցով կարելի է կիսվել: Google-ի գործիքներ են Google Docs, Google Sheets, Google Presentations, Google Classroom, Kahoot!, LearningApps. Microsoft-ի գործիքներ են Teams, Word, Excel, Power Point…

Ինտերնետային գլոբալ համացանցը հնարավորություն է ստեղծում հեռավար կազմակերպելու էլեկտրոնային թեմատիկ կոնֆերանսներ: Տեսակոնֆերանսների ժամանակ մասնակիցները փոխհամագործակցում են, միաժամանակ հնարավոր է շփում երկու մասնակիցների միջև (խորհրդատվություն), մեկի հաղորդակցում բոլորի հետ (դասախոսություն), բոլոր մասնակիցների ընդհանուր հաղորդակցում (հեռուստակամուրջ): Հաղորդակցական այդ տեխնոլոգիան ներկայումս լայն կիրառում ունի ոչ միայն կրթական ոլորտում, այլև միջմշակութային փոխհարաբերություններում: Համացանցային տեխնոլոգիայի յուրահատկությունն այն է, որ և սովորողներին, և դասավանդողներին ուսումնական գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրների ընտրության մեծ հնարավորություններ են տրվում:

Ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Օգտագործելով համակարգչի բացառիկ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մատչելի, ընկալելի ու հետաքրքիր: Համակարգիչը կարող է օգնել դասավանդողին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար: Էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը կարող է ավելի դյուրընկալ դարձնել

մատուցվող նյութը, գրքային նյութը կարող է վերածվել պրակտիկ իրադրության:

Գլուխ 4.Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը օտար լեզվի, մասնավորապես ֆրանսերենի ուսուցման գործում

Այսօր օտար լեզուների՝ որպես ուսումնական առարկայի հիմնական նպատակը հաղորդակցական կարողությունների ու հմտությունների ձևավորումն է, որը ներառում է անմիջական հաղորդակցման, խոսելու և լսելով հասկանալու, ինչպես նաև միջնորդավորված հաղորդակցման, այսինքն՝ ընթերցանության միջոցով, օտար լեզվով տեքստը հասկանալու և գրավոր խոսքին տիրապետելու բաղադրիչները:

Օտար լեզվի ճիշտ դասավանդման նշանակությունը տարրական դպրոցում խիստ կարևոր է, քանի որ այստեղ է դրվում ողջ դասընթացի հիմքը, իսկ այնուհետև ձևավորվում տարրական հաղորդակցական իրազեկությունը: Օրինակ՝ այբուբենի տառերի ուսումնասիրության դասի ժամանակ ուսուցիչը կարող է գտնել և ցուցադրել այնպիսի տեսանյութեր, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան լսելու տառերի ճիշտ արտասանությունը և դրանց կիրառումը բառերի մեջ: Այս մեթոդի միջոցով ավելի հիշվող և տպավորիչ կդառնա դասապրոցեսը, ինչու ոչ ուսուցիչը կարող է նաև տվյալ տեսանյութն աշակերտների ծնողներին ուղարկել, որպեսզի աշակերտները տանը նույնպես հնարավորություն ունենան դասը վերհիշելու:

Հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է ընտրել արդյունավետ յուրացում ապահովող ուսումնական նյութ, ապա ստեղծել համապատասխան հաղորդակցական իրադրություններ, որոնք խթանում են խոսքային կարողությունների, ստեղծագործական մտածողության զարգացումը, խոսքային մտադրությունների իրականացումը: Իմ դասերի ընթացքում ես ձգտում եմ բոլոր սովորողներին, առանց բացառության, հաղորդակից դարձնել ուսուցանվող նյութին: Այդ հաղորդակցումը կարող է ունենալ տարբեր ձևեր՝ խաղ, երկխոսություն, հարց ու պատասխան, երգ, տեսահոլովակ: Առաջադրանքը պետք է լինի հետաքրքիր, խթանի սովորողների ակտիվ գործունեությունը: Տարբեր ընդունակություններ ու կարողութիուններ ունեցող աշակերտներին տրվում են իրենց ընդունակություններին համապատասխան առաջադրանքներ՝ կտրատել, սոսնձել, նկարել, գրել, բառարաններ ու գրքեր թերթել, շարադրել: Այս ամենը թույլ է տալիս տարբեր լեզվական պատրաստվածությամբ սովորողներին հավասարապես մասնակցել տրված առաջադրանքի կատարմանը:

Ունկնդրելու նյութի առատ աղբյուր են նաև համացանցն ու հեռուստատեսությունը: Դասարանում համակարգիչը հաջողությամբ սինթեզի մեջ է մտնում դպրոցական առարկաների հետ, ներդաշնակորեն լրացնում այն, զգալիորեն մեծացնում է ուսուցման արդյունավետությունը, աշակերտների ստեղծա-

գործական ունակությունները, ակտիվացնում և խթանում է ճանաչողական հետաքրքրությունը: Ուսումնական գործընթացում այս տեխնոլոգիաների կիրառման շրջանակը շատ մեծ է՝ որպես վիզուալացման գործիք օգտագործելուց մինչև կրթական տեղեկատվության ներկայացման մեթոդներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներից կարելի է օգտվել դասապրոցեսի տարբեր փուլերում: Օրինակ՝ նոր թեման ներկայացնել կարելի է լուսանկարների, տեսանյութերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսական նյութի համառոտ ներկայացմամբ: Ուսուցիչը դառնում է ուղեկից, ուղղորդող դեր է կատարում աշակերտի համար, իսկ աշակերտն էլ իր հերթին ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դասապրոցեսին: Ստացած գիտելիքի ստուգումը նունպես կարելի է իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, խթանում է աշակերտի մասնակցությունը: Հնարավոր է կազմել ստուգիչ թեստեր յուրաքանչյուր աշակերտի ունակություններին ու կարողություններին համապատասխան՝ ապահովելով շերտավոր ուսուցում և անհատական մոտեցում:

Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը: Շատ կայքեր առաջարկում են նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել հաղորդակցական հմտությունների ձևավորման համար: Ինչպես օրինակ՝ Kahoot!, Quizz, LearningApps կայքերը առաջարկում են բազմապիսի ինտերակտիվ խաղային առաջադրանքներ՝ նյութի ամփոփման և գնահատման համար:

Ընթերցանության ոլորտում, օրինակ, կարող ենք նշել «Bonjour de France» հավելվածը, «Le francais à votre portée» հավելվածը (www.bonjourdefrance.com), որն առաջարկում է տարբեր բարդության տեքստեր ընթերցանության համար, ինչպես նաև բազմաբնույթ առաջադրանքներ: Ինչ վերաբերում է բանավոր ըմբռնմանը, կարելի է օգտվել հետևյալ կայքից՝ Apprendre le français avec TV5 (www.tv5.org/TV5Site/enseignants/apprendre_francais.php).

Առցանց վարժությունների լայն տեսականի են առաջարկում Le Point FLE, Français Facile կայքերը:

Արդիական իրադարձություններին հաղորդակից դառնալու համար 1jour1actu կայքը հիանալի տեղեկատվական գործիք է: Տեսանյութ դիտելը, ռեպորտաժ լսելը պետք է ուղեկցվի կոնկրետ առաջադրանքներով՝ սովորողների ստացած գիտելիքն ու կատարած աշխատանքը ստուգելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, իմ կատարած հետազոտական աշխատանքի և սեփական աշխատանքային փորձի արդյունքում եկա այն եզրակացության, որ ՏՀՏ միջոցների կիրառումն ունի և՝ առավելություններ, և՝ թերություններ: Համակարգչի առջեւ նստելը խլում է խոսելու, շփվելու, խաղալու, երևակայելու, ներքուստ միտքը կենտրոնացնել սովորելու ժամանակը՝ հանգեցնելով հետընթացի: Առաջացնում է կախվածություն եւ առողջության հետ կապված խնդիրներ: Սակայն անվիճելի է այն, որ ՏՀՏ միջոցների կիրառումը թույլ է տալիս ավելի մատչելի և երեխաների համար ընկալելի ձևով ներկայացնել ասելիքը: Հատկապես ԿԱՊԿՈՒ սովորողների պարագայում ՏՀՏ-ի կիրառումը հնարավորություն է տալիս նրանց ուշադրությունը կենտրոնացնել տվյալ նյութի վրա, հնարավորություն է տալիս յուրացնել տվյալ նյութը իրենց կարողությունների չափով: 21-րդ դարի կրթությունը դժվար է պատկերացնել առանց ՏՀՏ միջոցների կիրառման, և այն դասապրոցեսը դարձնում է ժամանակի պահանջներին համահունչ: Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է սովորողներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Այսօր համակարգչային տեխնիկան կարելի է համարել գիտելիքի փոխանցման նոր միջոց, որը համապատասխանում է ուսուցման և երեխայի զարգացման որակապես նոր բովանդակությանը: Հետևաբար, ուսուցչի մասնագիտական, առարկայական գիտելիքների կարողությունների մասն են կազմում մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը, որոնք ուսուցման գործընթացի արդյունավետությունն ու ներգրավվածությունն ապահովող կարևոր ուղիներից են: Ուսուցիչը ՏՀՏ-ների կիրառման պարագայում հանդիսանում է ոչ միայն տեղեկատվության, գիտելիքների, փաստերի «աղբյուր», այլև սովորողներին աջակցում է դառնալու ուսուցման գործընթացի ակտիվ սուբյեկտներ, ուղղորդում է աշակերտներին ինքնուրույն փնտրել նոր տեղեկատվություն, պարզաբանել, թե գտածն արդյոք համապատասխանում է տրված պահանջներին, ինչպես նաև հասկանալու, թե այդ ինֆորմացիան ինչպես օգտագործել իրենց առջև դրված հարցերի և բարդ պրոբլեմների լուծման դեպքում: Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել

այնպիսի մեթոդների համակարգ, որտեղ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում ինքնուրույն ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է: Ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ բոլոր աշակերտները մասնակցում են դասին, միևնույն ժամանակ դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու յուրաքանչյուրի գիտելիքներն ու իրական կարողությունները: Սակայն ուսուցիչը ևս պետք է ցուցաբերի իր հմտությունը. նա պիտի իմանա յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կիրառի տարբերակված ուսուցում: Հաջողության հասնելով՝ աշակերտը դառնում է ավելի վստահ, մեծանում է ավելին իմանալու և դասին ակտիվորեն մասնակցելու ցանկությունը: Մեթոդները բազմազան են, սակայն ընտրությունը պետք է լինի զգուշավոր, որպեսզի հակառակ արդյունք չունենա: Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Ավանդական ուսուցիչ-աշակերտ-դասագիրք սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, օրինակ, որ սովորողները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները, օրինակ՝ համակարգչով գրելու դեպքում սովորողներն ավելի ինքնավստահ են: Տեխնոլոգիան կարող է նաև զարգացնել սովորողների գեղարվեստական հմտությունները. տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլ միջոցներ նպաստում են սովորողների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը: Այն սովորողներին հնարավորություն է տալիս իմաստալից աշխատանք կատարելու: Սովորողները կարիք ունեն ստեղծելու այնպիսի օգտակար հետազոտական աշխատանքներ, որոնք կարևոր արժեք կունենան նաև ուսումնական հաստատությունից դուրս: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են օգնել դասավանդողին՝ հնարավորություն տալով նրան խնայելու ժամանակը և ջանքերը ներդնելու այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն՝ ուսումնական միջավայրի մշտական գնահատման ու բարելավման համար:

Գրականություն

1. Մելանյա Աստվածատրյան, Գայանե Թերզյան, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Աստղիկ հրատարակչություն, Երևան 2004
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան 2005.
3. Օտար լեզուները Հայաստանում - 2017 ԿԱԻ
4. https://www.cairn.info/revue-francaise-de-linguistique-appliquee-2006-1-page-119.htm
5. http://pedagotic.ca/?post/2010/12/13/Les-TIC-et-la-langue-fran%C3%A7aise